Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ << ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ >> ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թոմա՝ << **Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում>>:**

Անցկացման վայր՝ **Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց**

Աշխատանքի ղեկավար՝ **Հասմիկ Բեյբության**

Ուսուցիչ՝ **Անի Կարապետյան**

Դպրոց՝ **Մարտունու Մնաց Մելիք –Շահումյանցի անվան N1 հիմնական դպրոց**

Մարտունի 2022

# Բովանդակություն

1. . Ներածություն ——————————————————————— 3-10

2. Գլուխ 1-ին՝ Մանուշակաձոր ——————————————————————11-23

3. Գլուխ 2 ——————————————————————————————25-36

4. գլուխ 3——————————————————————————————37-41

5. գլուխ 4——————————————————————————————41-48

Վերջաբան——————————————————————————————49-51

Հավելված ——————————————————————————— 51-61

Գրականության ցանկ ——————————————————————————62

# Ներածություն

Հայոց պատմությունը միշտ ուսումնասիրվել է, և միշտ ուսումնասիրությունների կարիք
ունի։ Դեռևս վաղնջական ժամանակներից հայը թողել է այնպիսի հետք Հայկական լեռնաշխարհում, որոնք կարելի է
ուսումնասիրել անվերջ։ Հայ ժողովուրդը թողել է և շարունակում է թողնել այնպիսի մշակութային ժառանգություն, որը պատմության աղբյուր է հանդիսանում և հետաքրքրում է ոչ միայն մեզ, այլ
նաև օտարերկրյա հետազոտողներին։ Պատմագրության մեջ դասակարգված կարև որ
խմբի է պատկանում նշված ժամանակահատվածի վերաբերյալ սկզբնաղբյուրային նշանակության նյութը՝ տարեգրություններ, պատումներ, ասքեր և այլն։

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն նրա անցած ուղին է, կենսագրությունն ու հիշողությունը, դարերի հոլովույթում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը: Այն քաղաքացու, հասարակության և պետության ապագա գործունեության հիմքն է: Յուրաքանչյուր քաղաքակրթության պատմության հոլովույթում: Դրանով է կանխորոշվում անձի, քաղաքացու և պետության դերակատարումը համաշխարհային գործընթացներում: Բնագավառի իմացության միջոցով է ձևավորվում ազգային ինքնագիտակցություն ու մտածողություն, պատասխանատու և սեփական տեսակետ ու դիրքորոշում ունեցող, կշռադատված որոշումներ կայացնող անձի ու քաղաքացու ձևավորումը։ Դասընթացները նպաստում են իր ինքնությունն ու քաղաքակրթությունների արժեհամակարգերը ճանաչող անհատի ձևավորմանը, որն էլ միտված կլինի իր գործունեությամբ

նպաստելու հայ և համաշխարհային հասարակության զարգացմանն ու վերափոխմանը՝ այն սկսելով իր անձից և իր սոցիալական ու բնական միջավայրից: Ուսումնասիրելու է աշխարհն ու տարբեր քաղաքակրթություններից ստացած ժառանգությունն ու դրանց ազդեցությունը մեր օրերի վրա: «Հայագիտություն» բնագավառի շնորհիվ է սովորողը տեղեկանում իր նախնիների անցած պատմական ուղուն: Բնագավառը ներառում է հիմնական դպրոցի V-XII դասարաններում ուսումնասիրվող. «Իմ հայրենիքը»՝ V դասարան Իմ հայրենիքն ու աշխարհը»՝ VI-IX-րդ դասարաններում Հայոց պատմություն առարկաները: V դասարանի «Իմ հայրենիքը» առարկան ընդգրկում է հայ ժողովրդի ծագումնաբանությունը, մեծ ու փոքր հայրենիքի մասին ընկալումները՝ զուգորդելով հենց իր բնակատեղի ապրելատեղի քարտեզը գծելով, այնուհետև ճանաչելով իր հայրենիքը՝ ամբողջության մեջ և աշխարհի հետ հարաբերության մեջ՝ ազգային կենցաղը, խոհանոցը, մշակույթը, էպոսը, առասպելներն ու ավանդապատումները, պատմական կարևոր իրադարձությունները, դեմքերն ուսումնասիրելով: VI դասարանի «Իմ հայրենիքն ու աշխարհը» առարկան ընդգրկում է քաղաքակրթությունների պատմության հնագույն շրջանը՝ ներառելով քաղաքական, տնտեսական, մշակութային և սոցիալական պատմությունը: VII-IX դասարանների «Հայոց պատմություն» առարկայի ծրագիրն ընդգրկում է Հայաստանի և հայ ժողովրդի՝ Ք.ծ.ա. 4 հազարամյակից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածի պատմությունը: Դասընթացի ուսումնառությունը կառուցված է հետևյալ սկզբունքով. ծագումնաբանությունից ու առասպելներից մինչև էպիկական պատումներ, այնուհետև իրական պատմական կերպարներ, իրադարձություններ ու պատմություն: Հիմնական դպրոցում սովորողները հայոց պատմության ծրագրի շրջանակներում կծանոթանան հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի ունեցած դժվարություններին ու կորուստներին:

Անշուշտ կարևոր է նաև ավելի ուշ ժամանակաշրջանում ստեղծված գործերը ն ույնպես:

Ճիշտ է այդ գործերից շատերի աղբյուրագիտական բազան շարունակում է նույն

պես մնալ տարեգրություններն ու ասքերը, ինչպես նաև հուշարձանները, խաչքարերը, տապանաքարերը, կենցաղային
իրերը: Սակայն յուրաքանչյուր հեղինակ նորովի մեկնաբանելով իրադարձություն ները, դրանով հանդերձ հարստացնում
է նաև հիմնախնդրի վերաբերյալ առկա գրականության պաշարը: Մեր կողմից ընտրված թեմայի վերաբերյալ ներկայումս գոյություն ունի արժեքավոր գրականություն, սակայն հետաքրքրությունը << Մանուշակաձորի >> , << Աստվածածին >> գյուղի, << Կույս Վարվառա>> մատուռի, << Սարոյ խաչերի>> և իհարկե Բար՝ Ավդալաղալու հետագայում Վաղաշեն գյուղի նկատմամբ շարունակում է լինել արդիական նույնիսկ մեր օրերում և սպասում են ուսումնասիրությունների:

Աշխատանքը իրականացնելու համար օգտվել եմ պատմական << Հետքերի որոնում>> գործիքից: Էքսկուրսիաները հիմնականում ձանձրալի, սովորողների պասիվ մասնակցություն պահանջող գործողություններ են: Դրանց փոխարեն սովորողները կարող են պատմական հետքեր որոնել:

Սա հիանալի միջոց է միջավայրի պատմությունն ուսումնասիրելու, պատմական աղբյուրների հետ աշխատելու, թիմային աշխատանքի հմտություններ ձեռք բերելու համար:[1]

Տարբերակները կարող են լինել բազմազան, օրինակ կառույցները ուսումնասիրել պատմական տարբեր տեսանկյուններից: Կարելի է պատմական տեսանկյունից ուսումնասիրել կառույցների ճարտարապետական լուծումները. ե՞րբ են կառուցվել, տվյալ ժամանակի քաղաքական, տնտեսական, մշակութային իրականությունն ինչպե՞ս է ազդել կառույցների ճարտարապետության վրա և այլն: Նման կառույցներ, օրինակ՝ հին գործարաններ, կոմբինատներ, եկեղեցիներ, փոքրիկ թանգարաներ կարելի է գտնել Հայաստանի գրեթե բոլոր քաղաքներում և գյուղերում, հետևաբար այսպիսի ուսումնասիրությունները կարող են իրականացվել յուրաքանչյուր վայրում:

1. Ձևակերպեք ուսումնասիրության հիմնական հարցը

[1] Գիրք պատմության ուսուցման ինչու՞, ինչպե՞ս էջ 169 <<Պրստիգմա կրթական հիմնադրամ>>2020թ

Օրինակներ՝

. Գտեք տվյալ կառույցի հելլենիստական ոճի հետքերը։

. Գտեք խորհրդային ժամանակաշրջանից մնացած կառույցներ, որտեղ պահպանվել են այդ ժամանակներին բնորոշ ինչ-որ պատկերներ,քանդակներ, ցուցանակներ, պաստառներ և այլն։ Այդպիսի կառույցներ այսօր էլ կարելի է գտնել ոչ միայն Հայաստանի մեծ քաղաքներում, այլև մարզերի միջին ու փոքր քաղաքներում և գյուղերում։ Սովորողները կարող են ընտրել հենց իրենց կամ մոտակա բնակավայրերը և նման կառույցների օրինակով ուսումնասիրել Խորհրդային Հայաստանի պատմության սոցիալ-տնտեսական, հասարակական տարբեր շերտերին վերաբերող թեմաներ։

2. Սովորողներին տրամադրեք մեկ-երկու << հետքի>> կառույցի, վայրի օրինակ և առաջարկեք ինքնուրույն գտնել մնացած <<հետքերը>>։

. Առաջադրանքները պետք է կապված լինեն տարբեր վայրերի հետ, որպեսզի սովորողները պատասխանները փնտրեն և գտնեն տարբեր վայրերից՝ ուսումնասիրելով ողջ միջավայրը։

. Դրանք կարող են պարունակել ճանապարհային ուղղորդումներ, օրինակ՝ այս հարցին պատասխանելու համար այսինչ այգով բարձրացեք մինչև վերջ, հետո թեքվեք դեպի պատմական այսինչ կերպարի կամ իրադարձության անունով կոչված փողոց։

3 Միասին քննարկեք, թե ինչ բացահայտվեց պատմության հետքեր որոնելուց։

**Սովորողների խմբին տրվում է առաջադրանք՝** Վաղաշենում գտնել հելլենիստական ոճ ունեցող կառույցներ կամ կառույցների բաղադրիչներ՝ կամարներ, սյուներ և այլն։

**Կարևոր է, որ սովորողներն՝** իրենց ընտրած տարածքն ուսումնասիրելիս ուշադրություն դարձնեն ոչ միայն հայտնի մեծ կառույցներին, այլև երբեմն աննկատ մնացող ճարտարապետական զարդանախշերին, հին դռներին և այլն։

Օրինակ՝ << Հելլենիստական ոճի հետքերը Վաղաշենում>>



[2]

[2] Այստեղ պատկերված է հելլենիստական սյունաքար

**Նախագծի հետազոտական հարցեր**

. Ե՞րբ է կառուցվել շինությունը։

. Ինչու՞ է շինությունը կառուցվել հելլենիստական մշակութային ոճին հատուկ տարբեր բաղադրիչներով՝ կամարներ, սյուներ, զարդանախշեր և այլն։

. Կա՞ արդյոք մշակութային ազդեցություն, որը միահյուսված է հելլենիստական ոճի հետ և ինչու՞ է այն միահյուսվել։

**Նախագծի հետազոտական հարցեր.**

. Երբ է ստեղծվել կառույցը։

. Պատմական ի՞նչ համատեքստով է կապված տվյալ կառույցը կամ հուշարձանը։

. Ինչպիսի՞ իրադարձությունների հետ է կապված տվյալ կառույցը։

. Ճարտարապետական ինչպիսի՞ ոճ ունի տվյալ կառույցը և ինչու՞ է այդ ոճով կառուցվել։

Կարելի է առանձնացնել այնպիսի կառույցներ, որոնցից ժամանակին հնչեցվել են պատմական ելույթներ, և դրանց հիման վրա նույնպես պատմական ուսումնասիրություն իրականացնել։

**Զարգացնենք աշխատանքը**

. Խմբերից յուրաքանչյուրն իր հետազոտական նախագծի թեմայով դպրոցում կարող է պատրաստել ֆոտոթանգարան։

. Խմբերը կարող են համեմատել կառույցների և հուշարձանների նախկին և ներկա լուսանկարները, բացահայտել, թե ժամանակի ընթացքում ինչպիսի փոփոխություններ են դրանք կրել և ինչու՞։

. Սովորողները կարող են ուսումնասիրել կառույցների ներկայիս վիճակը, քննարկել դրանց պահպանության տարբեր հարցեր։

Ցանկացած սերունդ պարտավոր է կրկին և նորովի անդրադառնալ անցյալին, որ պեսզի օբյեկտիվորեն գնահատի ներկան և ճիշտ կանխորոշի ապագան: Այդ առո ւմով է, որ ներկայումս ևս կարևոր է 10-18-րդ
դարերի իրադարձությունների ուսումնասիրումը: Ավելին, անցածի ուսումնասիրո ւթյունը օգնումէ այսօրվա մեր սերնդին հասկանալ տարածաշրջանային մի շարք ընդհանուր օրինաչափություններ և, ելնելով դրանցից,
որպես ուսումնասիրողներ ճիշտ գնահատել ժամանակակից աշխարհի բարդ զար գացումները: Թեման կարևորվում է նաև նրանով,
որ այն անմիջական առնչություն ունի մոնղոլ- թաթարական
, լեզգիական հարձակումների , համաճարակի ,
ինչպես նաև Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան վերաբնակեցված մե ր հայրենակիցների կյանքի, կենցաղի, մշակույթի՝ թողած ժառանգության հետ:

<< Մանուշակաձոր>> խորագրով թեման ընտրելիս առաջնորդվել ենք նաև այն ի րողությամբ,
որ վերոհիշյալ իրադարձությունների ուսումնասիրումն ունի որոշակի իմացաբան ա-
կան նշանակություն և թույլ է տալիս ավելի համակարգված գիտելիքներ ձեռք բե րել 10-18-րդ դարերի մի շարք իրադարձությունների մասին:

Ելնելով վերոհիշյալից՝ աշխատանքի նպատակներն են.

1. << Զորով ելնենք Աստվածածին >> և << Կույս Վարվառա >> մատուռների ստեղծման պատմության ուսումնասիրումը, համեմատումն ու վերլուծումը:

2. Աստվածածին և Բար գյուղի բնակիչների պայքարը քոչվոր ցեղերի դեմ, համաճարակի տարածումը դրանց պատճառով գյուղի ավերումը:

3. գյուղի վերաբնակեցումը՝ եկեղեցու վերակառուցումը, եկեղեցու գույքի նվիրատվությունը, եկեղեցու գույքի բռնագրավումը:

Աշխատանքի նպատակներին հասնելու համար կարևորվում են հետևյալ խնդիրն երը.

. Բար գյուղի վերաբնակեցումը Ալաշկերտի Քոփկռան գյուղի բնակիչների կողմից, եկեղեցու և մատուռի վերակառուցումը:

. Պայքարը արտաքին թշնամիների դեմ, եկեղեցու զանգի վերջին ղողանջները:

. Խորհրդային իշխանության տարիներին եկեղեցու վերածվումը կոլտնտեսության պահեստի, << Սարոյ խաչերի>> մատուռի ավերումը, այնուհետև նոր մատուռի կառուցումը:

Ուսումնասիրված աշխատանքի փաստական հիմքը կազմում են տարբեր ժամանակներում լույս տեսած գրականությունը և մշակութային որոշ անձերի կենսագրական տվյալներին վերաբերող աշխատանքները, գյուղացիների պատմածները:

Աշխատանքում առաջնությունը տրվել է նաև վերջին շրջանում լույս տեսած գործերին,
ինչը թույլ է տվել առավել անաչառ մոտենալ քննարկվող խնդիրներին և հարցերի լուսաբանմանը, իրականացնել բազմակողմանի ուսումնասիրություն,
և ապա փաստական նյութը ճիշտ շարադրել:

Աշխատանքը ուսումնասիրվել է համակողմանի, գիտական սկզբունքների կիր-
առմամբ: Աշխատանքի շարադրման ընթացքում, հետևելով դեպքերի հաջորդականությանն ու իրադարձությունների տրամաբանական ընթացքին, համադրելով տարբեր բնույթի նյութեր, համեմատելով հիմնահարցի վերաբերյալ տարբեր տեսակետներ ձըգտել ենք անկողմնակալ լուսաբանել զարգացման առաջընթացի տրամաբանական ուղին:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից և վերջաբանից: Առկա է նաև օգտագործված գրականության ցանկ:

Աշխատանքի ներածությունում փորձել ենք հիմնավորել թեմայի իմացաբանական նշանակությունը, արդիականությունը և կարևորությունը:

Աշխատանքի առաջին գլխում ներկայացված է << Կույս Վարվառա >> կամ սուրբ Աստվածածին եկեղեցին , << Զորով ելնենք Աստվածածին>> մատուռը, << Սարոյ խաչերը>>, տեղադրված են լուսանկարներ, գծագրեր, չափագրումներ:

Գլուխ երկրորդում ներկայացված են հուշարձանում,
նրա շրջակայքում առկա վիմագիր արձանագրությունները, մասնակիցների կողմից դրանց արտագրումը:

Գլուխ երրորդում ներկայացված է հուշարձանի հետ կապված ավանդույթները, պատմությունները, իրադարձությունները և հիշողությունները՝ մասնակիցների կողմից դրանց ուսումնասիրումը:

Գլուխ չորրորդում ներկայացված է հուշարձանի տարածքում մասնակիցների կատարած աշխատանքները՝ հատակագծերի կազմումը, լուսանկարները:
Հետազոտական աշխատանքներին մասնակցել են 9-րդ դասարանի յոթ աշակերտներ:

Աշխատանքի նպատակն է՝ սովորողների հետ ուսումնասիրություններ կատարելով հասնել մեր ակունքներին, ծանոթանալ ավանդույթներին, դաստիարակել ռազմահայրենասիրություն:

Վերջաբանում ներկայացված է աշխատանքի ամփոփումը:

Առկա է գրականության ցանկը և հավելվածը:

# Գլուխ 1-ին

**Վաղուց ասված է, թե անցյալի պատմությունը**

**Մի լուսավոր լապտեր է, որն ամեն մի ժողովուրդ**

**Ձեռքին պետք է ունենա իր ճամփան անմոլոր գնալու համար...**

**Հովհաննես Թումանյան**

## Մանուշակաձոր

Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղ.

Երբվանից է սկսվում գյուղի պատմությունը,
հազարամյակների հնություն ունեցող դամբարանադաշտից,
որի վրա փռված է գյուղը,
Աղլներ կոչվող վայրից որոնք կիկլոպյան կառույցներ են, Արտաշես 1-ի (Ք.ա. 189-
160թթ) ժամանակից, որի թողած արքունական սահմանաքարը արամերեն արձա նագրությամբ, որը գտնվել է Վաղաշենից հարավ –
արևելք բարձր բլրի գլխին գտնվող վանքի տարածքում,
թե հելլենիզմյան դարաշրջանից մնացած սյունաքարից...

Վաղաշեն գյուղում ամեն մի քար պատմության աղբյուր է, պատմության վկա...

Ըստ Բարխուդարյանի գյուղի Մեսրոպ Արքեպիսկոպոս հին անունը մոռացված է[3], սակայն ըստ Սմբատյանցի գյուղը կոչվել վել է Ավդալաղալու[4], մինչդեռ գյուղացիների վկայությամբ գյուղի սկզբնական անվանումը եղել է Բար։1935 թվականին Հայաստանի կառավարության հրամանագրով գյուղը վերանվանվել է Վաղաշեն։ Գյուղի տարածքում կան հնագիտական - ճարտարապետական հուշարձաններ, հնամենի խաչքարեր, մատուռներ։ Այս ամենի վառ ապացույցն է առ այն, որ Սևանա լճի ավազանը ( լճի հարավ- արևմուտքում է գյուղը ) հայ ժողովրդի բնորրաններից մեկն է, և ուսումնասիրության կարիք ունի։

Գյուղի կենտրոնում կա երկու եկեղեցի՝ մեկը նորակառույց, մյուսը սուրբ Աստվածածին եկեղեցին է, հին գերեզմանատան կենտրոնում, որը Բար գյուղացիները կառուցել են 1695 թվականին անմշակ ժայռ քարերով։ Եկեղեցու մուտքի մոտ դրված են տափակ տ ապանաքարեր։ Եկեղեցու մուտքի բարավորի վրա վարպետ գրիչն արձանագրել է << հոգվույնն սրբոյ և նորակնունք սուրբ Աստվածածնիս բարեխոսությամբ, ի թվին ամենասրբեցելոյ։
ՌՈՂԵ։ (1695թ) և ազգիս հայոց ՌՃԽԴ։(1695թ) ես մեղապարտ Շմավոն, ունենամիտ սպասավոր հայոց իշատակոյ սրբոյ Անտոնի>> ։

Արձանագրությունը հիշատակվում է նաև Ս. Բարխուդարյանի մոտ, որը շինարարական բնույթի արձանագրություն է։[5]

---

[3]Ս. Բարխուդարյան << Դիվան հայ վիմագրության >> արակ 4 էջ 178, Երևան 1973թ

[4] ՄեսրոպԱրքեպիսկոպոս Ամբարյանց << Տեղագիր Գեղարքունի Ծովագարդ գավառի>> Երևան 2016, էջ 353-354
[5] Ս. Բարխուդարյան << Դիվան հայ վիմագրության >> արակ 4 էջ 178, Երևան 1973թ

Անբացատրելիորեն ընդհատվում է Բար գյուղի պատմությունը։ Ս. Աստվածածին եկեղեցու բակի 1713 թվակիր տափակ տապանաքարերը վկայում են, որ նորակառույց եկեղեցին Բար գյուղին ծառայել է 20 տարուց էլ պակաս։

Անթափանց վարագուրված է Բար գյուղի պատմության այդ հատվածը. ու՞ր տեղահանվեցին նրա բնակիչները, սրի՞ քաշվեցին,
թե կրակի ու համաճարակի զոհ դարձան...

Նրանցից հետո գյուղն ամայացել է,
115 տարի մնացել անմարդաբնակ։ Հողին են հավասարվել գյուղացիների տները, փլվել, ավերվել է եկեղեցին, չորացել են առուները, ցամաքել՝ աղբյուրները։
Հին գյուղի կյանքի մասին պատմող քարա տապանա կերտ վկաները միայն սբ. Աստվածածին եկեղեցու բակում պահպանված քարերն ու խաչքարերն են, որ մի նչն օրս կանգուն են ու հմայում են կատարյալ արվեստի կախարդիչ ուժով։[6]

Բարխուդարյանը նույնպես վկայում է, որ 1713 թվականին վերաբերող տապանագրերի առատությունը, այն էլ իրար կողքի դրված և նույն ընտանիքի անդամներին վերաբերող գերեզմանաքարերից՝ վկայում են այդ թվականին պատահած, որևէ աղետի մասին, թերևս համաճարակ հիվանդության։

[6] Բաղդասար Հովհաննիսյան << Վաղաշեն >> Երևան 2007թ էջ 23-24

Այսպիսով գյուղի ավերման մասին առաջ է գալիս երկու տեսակետ՝ ըստ գյուղացիների գյուղը ավերվել է լեզգիների կողմից, ըստ Բարխուդարյանի՝ համաճարակից։

Սակայն սուրբ Աստվածածին եկեղեցու բակում պահպանված տապանաքարերն և կատարյալ արվեստի նմուշ խաչքարերը լապտերի լույս են անցյալի պատմությունը ուսումնասիրելու համար։ Եկեղեցու բակում կա 3-4 խաչքարեր, որոնք 10-13-րդ դարերի արվեստի նմուշներ են։[7]

[7] Ս. Բարխուդարյան << Դիվան հայ վիմագրության >> պակ 4 էջ 178, Երևան 1973թ

Եկեղեցուն կից սուրբ կույս Վարվառ մատուռի ներսի խաչքարերը արվեստի ան կրկնելի
նմուշ են նախշազարդված ժանյակներով և նրբահյուս վարդյակներով: Մատուռը կառուցված է անմշակ հսկայական քարերից, որոնց վրա միշտ մոմ են վառել: Մատուռը սալածածկ է, մուտքը եկեղեցու ներսից է, դռնակ չունի, շեմքի փոխարեն մշակված շինաքար կա, որի վրայով միայն ծնկաչոք կարելի է ներս մտնել:

Բար գյուղից օջախի ծուխ բարձրացավ 1829 թվականից,
երբ Ալաշկերտի Քոփկրան գյուղից գաղթականների քարավանը կանգ առավ սուրբ Աստվածածին եկեղեցու բակում,
իսկ գյուղը ինչ որ քուրդ հովվի անունով կոչվեց Ավդալաղալու։ Աստվածապաշտ

հայերի առաջին հիմնահարցն էր սուրբ Աստվածածին եկեղեցին կարգավորելը։ Փ

այտյափորագրության գեղեցիկ նմուշ է եկեղեցու փայտյա

դուռը:

Եկեղեցու անկյուններում մինչև այժմ կանգուն են չորս հզոր սյուններ:

Բեմը առաջին երկու սյունների մեջտեղում է,
խորանում՝ հատակից մեկ մետր բարձր,
երկու կողմից՝ տաշած քարով աստիճաներ:
Բեմի ճակատային մասում մինչև այժմ պահպանվում են փայտե ճախարակները, որոնցով բացվում, փակվում են վարագույրները:

Բեմի աջ և ձախ մասերում կան երկու նեղ լուսամուտներ,
որոնցով թափանցում է արևի թույլ շողը: Աստծո տանը ոգեղեն մոմի լույսը պիտ ի տիրի:

Եկեղեցու հարավային և հյուսիսային անկյուններում,
բեմին հավասար կան խուցեր,
ուր տիրացուները պահել են իրենց և քահանաների հանդերձները,
ինչպես նաև ճրագալույսի ձեթի կարասը:

Վարագույրի հետևում՝ խորանում,
դրված են եղել փայտից պատրաստված նախշազարդ գրակալները,
որոնք պատրաստվում էին ըստ կրոնական գրքերի ծավալի: Բեմի վրա դրվող մո մակալները արծաթից էին՝ 50 սմ բարձրությամբ:
Նրանք լուսավորում էին սուրբ գիրքը:
Մյուս մոմակալները, ուր հավատացյալներն էին մոմ վառում,
դարձյալ արծաթից էին՝ 15-20սմ բարձրությամբ:

Բեմի մոտից հյուսիսային պատի մեջ կնունքի ավազան է, իսկ հարավային պ ատի մեջ՝ կույս Վարվառա մատուռի փոքրիկ դռնակը:

Եկեղեցու վիմաքարը քառանկյուն, հղկված, որը դրված է եկեղեցու խորանում, բեմի վրա։
Այն եկեղեցու վեմն է՝ օծված Էջմիածնի սուրբ հայրերի կողմից՝ նորաբաց եկեղեցու օծման ժամանակ։ Վիմաքարի վրա բազմաթիվ փոքրիկ խաչեր կան, որոնք վկայում են,
որ գյուղական քահանաները բազմաթիվ անգամ են սուրբ պատարագ մատուցել։[8]

Եկեղեցու հատակը սալապատված է։ Բեմի ճակատային մասում փայտե ճախարակների միջոցով բացվել փակվել են երկու ծանր
մահուդե վարագույրները։ Գյուղի բնակիչ Վարդան Վարդանյանը պատմում է, որ վարագույրները եղել են թանկարժեք մահուդից՝ ոսկյա թելով կարված,որը գնվել է Մեհրի մայրիկի և գյուղացիների նվիրաբերած փողերով։

Առաջին վարագույրը դեղնավուն էր, բացվում էր երկկողմ։ Վարագույրի վրա պատկերված էր Հայաստանի լեռնաշխարհը, ուր արածում էին այծեր, ոչխարներ։

Երկրորդ վարագույրի վրա նկարված էին մարդիկ, որոնք փախչում էին հալածողներից։ Նկարված էր մի կշեռք,
որը չափում էր մարդկանց գործած մեղքերը։
Մարդկանց մեղքերի կշռանժարը միշտ ցածր էր։

Վարագույրի փեշերը երբ միանում էին, պատկերվում էր Մարիամ Աստվածածինը՝ մանկան հետ։ Նրա կողքերին պատկերված էին հրեշտակներ։ Վարագույրը եկեղեցու ներքին հարդարանքի փառահեղ պսակն էր։
Վարագույրերը խորհրդային իշխանության կողմից թալանվել են։[9]

Արևի շողը եկեղեցի է թափանցում բեմի աջ և ձախ մասերի երկու նեղ լուսամուտներից։

Կրոնական բնույթի նկարները զարդարում են խորանի պատերը։

---

[8] Բաղդասար Հովհաննիսյան <<Վաղաշեն>> էջ 74, Երևան 2007թ

[9] Բաղդասար Հովհաննիսյան <<Վաղաշեն>> էջ 74, Երևան 2007թ

Եկեղեցու հարավային և հյուսիսային անկյուններում,
բեմին հավասար կան խուցեր, վարագույրերի հետևում՝ խորանում,
դրված են եղել փայտյա նախշազարդ գրակալներ, արծաթյա շքեղ մոմակալներ և խնկամաններ։ Երբ գյուղացիները
գնացել են հարևան երկրներ ամպայման եկեղեցու համար բերել են նվերներ,
այդ ամենը ևս թալանվել է խորհրդային իշխանությունների կողմից։

Գյուղացիները իրենց ուժերով հին գերեզմանատունը քարով ցանկապատել էին,
որը կոչվում էր ժամբադան։ Ժամբադանի ներսում,
եկեղեցու արևմտյան պատի տակ, մուտքի մոտ, երկու խաչքարերի դիմաց
երկու հաստ գերաններից կառուցված է եղել զանգակատունը,
որն ուներ փայտե ծանր վերելակ,
որին ագուցված օղակներից կախված են եղել պղնձակուռ զանգերը բերված հեռ ավոր պղնձաձուլական գործարաններից, եկեղեցու զանգի
քաղցրահնչյուն ղողանջները եկեղեցի են կանչել հավատացյալ ու աստվածապաշ տ գյուղացիներին։

Գյուղից հարավ, 2 կմ հեռու Դևաքար կոչվող լեռնալանջերից դեպի հարավ,

երկու ձորերի միացման վայրում, լեռան տափարակին կա մի հին ու փոքր գյուղատեղ
՝ Աստվածածին գյուղը, որի բարձունքի վրա գտնվում են սրբատաշ քարերով շին

ված փոքր եկեղեցու ավերակներ, որը կառուցվել է 10-11-
րդ դարում, երբ գյուղը կանգուն էր:[10]

Զորով ելնենք Աստվածածին եկեղեցու շրջակայքում շատ խոնարհված խաչ
քարեր կան, որոնցից մեկը ինչ որ հավատացյալ ամրացրել է կանգուն դիրքով:
Խաչքարը խաչքարային արվեստի կատարելիություն
է: Հետագայում հին եկեղեցու փլատակների վրա սալածածկ փոքրիկ մատուռ են
կառուցել,
ուր հավատացյալները միայն ծնկաչոք կարող էին ներս ու դուրս անել: 1990
ականներին գյուղացիներից մեկը ինքնակամ վերանորոգում է կատարել փոխելով
մատուռի տեսքը, որը ըստ մեզ անթույլատրելի
է և պետք է արգելվեն նման ինքնուրույն գործողությունները:



Ավանդաբար պատմվում է,
որ լեզգիների արշավանքների ժամանակ հիմնահատակ ավերվում է գյուղը,
փրկվում է միայն Մանուշակ անունով մի աղջիկ, որը պատսպարվել է եկեղեցում:

Մեկ այլ ավանդության համաձայն, երբ լեզգիները հարձակվել են Վայոց Ձոր-
Կոթ ուղղությամբ, երկու քույրեր՝ Մանուշակ ու Վարվառ անուններով,

---

[10] Ս. Բարխուդարյան <<Դիվան հայ վիմագրության>> պրանկ 4 էջ 180:

գյուղից հարավ, բարձունքներում տեսնում են հարձակվողներին։
Թշնամու հարձակման մասին լուրը քույրերը հասցնում են հայտնել Աստվածածի ն և Բար գյուղերի բնակիչներին։
Մանուշակը հայրենակիցների հետ դիմում է ինքնապաշտպանության և զոհվում է հայրենի գյուղուի պաշտպանության համար։

Աստվածածին գյուղում և շրջակայքում երբեք պեղումներ չեն կատարվել։

## Բար գյուղի հայտնի մարդիկ։

## Ամեն մի աշխատանք ազնիվ է, և

## Ազնիվ է միմիայն աշխատանքը։

## Կարլեյլ

Շաբոների տոհմի պատմությունն սկսվում է Վարդանից,
որն ուժեղ, հաղթանդամ տղամարդ էր։ Չէր պատկերացնում,
որ աշխարհում մահ կա։ Բայց երբ իր ընկեր Մուրադի Մոսեն մահացավ,
նոր հասկացավ, որ ինքն էլ մահկանացու է։

Գյուղին ջրաղաց էր հարկավոր։ Շինարարությունը նախաձեռնեց Վարդանը։
Որմնադիրներն ինքն ու իր տղաներն էին՝ Մանոն և Ալեքսանդրը։ Շինաքարը բ երել էին մեր սարերից,
իսկ ջրաղացքարը՝ Քելբաջարից՝ սայլերով։ Շաբոյ Վարդանի ջրաղացը գյուղին ծ առայել է հարյուր տարի։

Վարդանը սիրել է խաղալ շախմատ, խաղով զբաղվել է մանուկ հասակից։
Խաղատախտակը քարից էր, քարերը՝ անասունի ոսկորից։
Ինքն էր պատրաստում։ Խաղն անվանում էր քըշ։ Վարդանին հաղթել չէին կարող՝ ճկուն միտք ուներ։
Վարդանի կրտսեր որդին ևս խաղում էր շախմատ։ Օրերից մի օր շախմատի մր ցույթ է սկսվում, որտեղ Վարդանի որդին հաղթում է,
և հաղթանակած վերադառնալով տուն բերկրանքը կիսում հարազատների հետ,
այդ ժամ Վարդանը նրան առաջարկում է շախմատ խաղալ և երկու
անգամ հաղթում է որդուն։

**Բժիների տոհմ**

Հովհաննեսի կյանքից մեջբերենք մի դեպք,
որը պատճառ է դարձել նրա և իր հետագա սերունդների տոհմանունը կնքելուն։

Աշնան սկիզբն էր։ Երիտասարդ Հովհաննեսը մի կնոջ հետ խոսակցություն ն էր վարում մարդաբոյ կանեփների մեջ։ Գյուղացի մի ուրիշ կին, հետաքրքրությունից դրդված՝ ուզում է իմանալ, թե այնտեղ ի՞նչ են անում, մտնում է կանեփների մեջ։ Արարքն արդարացնելու համար կանչում է բժի՜, բժի՜, բժի՜, իբրև կորած հորթն է որոնում։
Հորթի փոխարեն կանեփների միջից դուրս են գալիս Հովհաննեսն ու սիրուհին։ Այդ օրվանից գյուղացիները Հովհաննեսին անվանեցին Բժի։ Հետագայում տոհմը կոչվեց նրա մականունով բժիների տոհմ։

Բժիների տոհմից կանդրադառնանք Բժու Բադոյին։

Բժու Բադոն ուրախ, աշխատասեր, ասող-խոսող մարդ էր, երգում էր հայերեն, պարսկերեն, թուրքերեն և քրդերեն լեզուներով։ Լավ ձայն ուեր, պատմում էր երկրի ու երկնքի ստեղծման մասին, հաղորդում ավետարանական տարբեր զրույցներ։ Նրան մարդիկ հաճույքով էին լսում և հեռանում շնորհակալո ւթյամբ։

Նա պատմում էր մեր ժողովրդի հեռու և մոտիկ անցյալից։ Մեծ ոգևորությամբ պ ատմում էր <<
Սասնա ծռեր>> էպոսից։ Հետագայում բանահավաքները գրի առան Պարսամի Մո ւկուչի տարբերակը։ Մուկուչը վկայում
է, որ այդ տարբերակը լսել է Բժու Բադոյից։

Մկրտիչը պատմել է, որ << Սասնա ծռերը>> լսել է համագյուղացի Բժու Բադոյից (Բաղդասար Պետրոսյան), որը մահացել է 1930 ական թվականներին։
Բժու Բադոն ըստ Մկրտչի եղել է <<իմաստուն մարդ>>, մրցել մի շարք նշանավո ր աշուղների հետ (Ջիվանի, Սազայի
և ուրիշների) և հաղթելով սազերն առել։ Բժու Բադոյից բացի վեպը լսել է նաև համագյուղացի Նորսոյի Ավոյից։ <<
Ռուստամ Զալի>> Բուրզու ճյուղը ևս նա լսել է այդ երկու վիպասացից։[11]

1918թ թուրքերի դեմ Վեդիում և քրդերի դեմ Կոփոյի վայրում մղված կռիվներում զոհվել էին նրա որդիները
. Ապետնակը Հայաստանի առաջին Հանրապետության բանակի սպա էր, իսկ Մ իսակը Թիֆլիսի Կարմիր Ավետարան եկեղեցու մեներգիչ էր։
Ծերունի Բադոն մինչև մահ մղկտաց որդիների կորուստը։

Մեր խմբին հետաքրքրեց արդյոք Բժու Բադոյի սերունդները ոչինչ չունեն լս ած կամ գրի առած,
ինչ երգեր են երգել օդայում։ Մեզ ցույց տվեցին մի տետր, որը գրի էր առել Բժո ւ Բադոյի թոռը 1960 ական թվականներին լսելով իր հորաքույրներից. <<
Սումբաթի ու Սոֆիայի>>, << Քյարամի ու Ասլիի>>, <<

---

[11] Սասնա ծռեր հատոր Գ Մկրտիչ Պարսամի Ավետիսյան, էջ 401 Երևան 1979թ

Աղվանի և Օսանի>> սիրո պատմությունները, <<
Սև ջրի վարարում>> պատմությունը։

## Գլուխ երկրորդ

**<< Ճարտարապետությունը նույնպես աշխարհի տարեգրությունն է. նա խոսում է այն ժամանակ, երբ արդեն լռում են և երգերը, և ավանդությունները...>>**

**Ն. Վ. Գոգոլ**

Սուրբ Աստվածածին եկեղեցու արևմտյան պատերին, որպես անկյունաքար, ծառայում են օրորոցաձև տապանաքարեր։
Դրանցից մեկն ագուցված է եկեղեցու հարավային պատի արևմտյան անկյունի մոտ։ Երևում է միայն հարավային երեսը, որի վրա կան չորս խորաններ, մեջը՝ խաչեր, սրանից վեր՝ մեկ տող.
<< Ես Միրզայ աղէս կանկնցի խաչս Քաւպուլ աղին, թվ։ ՋՁԴ 1535 Շահնազին>>։

12

Շահնազ անունը պետք է թվականից առաջ լիներ։[13]

Տապանաքարերը երեք տեսակի են՝ ավանդական տափակ, օրորոցաձև, որն այժմ անվանվում է ձիաքար և չհղկված, անմշակ։

Տափակ և օրորոցաձև տապանաքարերը հանքաքարեր են, գորշ գույնի ընտիր բազալտ, որը հիանալի մշակվում է և որ, կարևոր է, շատ դիմացկուն է, չի քայքայվում։ Այդ քարերը բերվել են սարի << Հոլկներ >> կոչվող հանդամասի քարհանքից։

Դրանք անթերի հղկված, մշակված են։ Ունեն եզրագծեր, որոնք վերևի մասում կլորանում են և հիշեցնում մարդու գլուխ։ Եզրագծերից ներքև քառանկյուններ կան գծված։

---

[12] Բաղդասար Հովհաննիսյան << Վաղաշեն >>, Երևան 2007թ, էջ 23

[13] Ս. Բարխուդարյան << Դիվան հայ վիմագրության >> պրակ 4, էջ 179, Երևան 1973թ

Տապանաքարեր էլ կան, որոնց վրա,
ասես շրջանագծի ներսում, վարդի թուփ հիշեցնող,
հավերժություն կամ անմահություն խորհրդանշող խորաքանդակներ են։ Այդպիսի տապանաքարերի վրա վիմագիր չկա,
բայց դրանք վկայում են հայ հնագույն քարագործների հմուտ արհեստավոր լինել ը։

Տափակ տապանաքարերի վրա գրված վիմագիր գրերը հիացմունք են պատճառում իրենց անսխալ, գեղեցիկ ու առինքնող արվեստով։

Տապանաքարերին հնագույն գրիչ-
վարպետները դասական միջին հայերենով գրել են հանգուցյալի անունը,
հայրանունը, մերձավորների հետ ունեցած ազգակցական կապը,
մահվան թվականը՝ ըստ հայոց տոմարի։

Այս է հանգիստ Արութիւնին, Պաղտասարին որդի թվ ՌՃԽ 1691[14]

Խաչքար կերտելու արվեստը աննախադեպ զարգացման հասավ նաև օրորոցաձև տապանաքարեր պատրաստելիս։

Հնագույն քարագործ վարպետներն օրորոցաձև տապանաքարերը հղկել են անթերի։ Քարի երկու երեսներին կերտել են խորաններ։ Մի երեսին խորանների մեջ քանդակել են կենդանիներ, բույսերի տեսակներ, մարդիկ, նվագարաններ, կենցաղային իրեր։ Այս բոլորից վերև ընտիր տառատեսակներով գրել են հանգուցյալի մասին։[15]

Տապանաքարի մյուս երեսին՝ խորանների ներսում, քանդակել են խաչքարեր, որոնք իրար նման չեն, անկրկնելի են, կատարյալ։
Այսօր էլ դրանք գերում են իրենց արվեստի ուժով և չխամրող հմայքով։

---

[14] Ս. Բարխուդարյան << Դիվան հայ վիմագրության >> պրակ 4, էջ 179, Երևան 1973թ

[15] Բաղդասար Հովհաննիսյան << Վաղաշեն >>, Երևան 2007թ, էջ 22

Գյուղի հին գերեզմանատան տափակ և օրորոցաձև տապանաքարերը հն արավորություն են տալիս գաղափար կազմել ուշ միջնադարյան Հայաստանի Բա ր գյուղի բնակիչների լեզվի, սովորույթների,
երաժշտության նկատմամբ ունեցած վերաբերմունքի,
կրոնական համոզմունքների,
աշխարհն ու մարդուն ճանաչելու կարողությունների, արհեստների,
անասնապահության ու երկրագործության մասին։

Չհղկված,
անմշակ տապանաքարերը բերում էին մոտակա սարերից։ Ծանր քարերը սայլեր ով տեղափոխել չէին կարող։ Քարի մի կողին կլոր անցք էին փորում,
որտեղով անցկացնում էին շղթան կամ պարանը։ Կապում էին լծին ու երեքից չո րս զույգ եզներով քարը քարշ էին տալիս գերեզմանատուն ու դնում հանգուցյալի շիրիմին՝ առանց որևէ վիմագրության։

Այս արձանագրությունում գրված է՝ << Շնորհիւ ամենազորին այ հոր եւ որդւոյ
եւ հոգւոյնն սրբոյ եւ նորակունք սբ Ածածնիս բարեխօսթբ,
ի թին ամենայսրբեցելոյ։ ՌՈՂԵ։ 1695 եւ ազգիս հայոց ՌՃԽԴ։
1695 ես մեղապարտ Շմաւոն,
ունենամիտ սպասաւոր հայոց իշտակոյ սրբոյ Անտոնի>>։

Արձանագրությունը շինարարական բնույթի է,
վերջում պակասում է շինեցի բառը։

Մատուռը նույնպես կառուցված է անմշակ հսկայական քարերից,
որ սևացել են դարերի ընթացքում հավատացյալների վառած մոմերի ծխից։

Նույնիսկ Ստալինյան բռնապետության դաժան ճնշումների տարիներին գյուղաց իները խունկ են ծխել ննջեցյալների շիրիմներին, մոմ վառել սբ.
կույս Վառվառ մատուռի շարվածքին և եկեղեցու մուտքի քարե հարմարանքների ն։

1930-
ական թվականների խորհրդային իշխանությունների հալածանքների տարիներին եկեղեցական գրքերն ու ոչ թանկարժեք իրերը լցրել են այս մատուռի մեջ,
դուռը քարերով շարել, ծեփոնել,
իսկ եկեղեցին դարձրել կոլտնտեսության հացահատիկի պահեստ։

Այժմ մի քանի տարի է, ինչ եկեղեցին պահեստ չէ. դուռը շրջանակով հանված է տեղից, ծածկը կիսով չափ փլվել է, մատուռի դռնակը բաց է, եկեղեցիական իրերն ու գրքերը՝ թալանված։

Սբ. Աստվածածին եկեղեցի ուխտի են գալիս ոչ միայն վաղաշենցիները, այլև շրջանի ու հանրապետության այլ վայրերի հավատացյալները։

Ցավոք վիմագրությունը ամբողջությամբ տեսանելի չէ,
քանի որ մեծ մասը ծեփված է։

Հնագույն շքեղ, հավանական է հելլենիստական դարաշրջանի,
կառույցի հզոր այունների հղկված,
սրբատաշ պատվանդաններ կան Աշոտ Եղիազարյանի
և Մաքսիմ Մկրտչյանի տների բակերում։



Մանուշակի սուրբ շիրիմը մինչև այժմ Վաղաշենի սարի տարածքի Հոլկներ կոչվող հանդամասում է։ Միայնակ շիրմաքարը պահպանվել
է։ Միայն վերջին շրջանում, երբ այդ հողակտորն սկսեցին տրակտորով մշակել, շիրմաքարը տեղաշարժվել է։



Ավերված հին գյուղի փլատակներից աչքի են ընկնում ձիթհանքը և դինգը, որոնք աշխատել են քաշող ուժի միջոցով։

Ավերակ գյուղի տարածքում պահպանվել է հին
գերեզմանատունը՝ տափակ և օրորոցաձև շիրմաքարերով։ Քիչ վերևում հսկա քարաժայռ է, որին արևահայաց քանդակված խաչեր են։ Հսկայածավալ ժայռ-
խաչքարերը իշխում է ձորին,
իսկ ամեն գարուն գյուղի ավերակների մեջ ծաղկող մասրենին բույր
է խնկարկում, թեթև սյուքից հեզանազ օրորվում են արնագույն կակաչները։

Հին գերեզմանատան տապանաքարերը նույնպես բերվել են Հոլկների քարհանքից ։
Օրորոցաձև տապանաքարերից մեկի վրա անընթեռնելի վիմագրություն կա։ Այդ

քար[16]ը հավանաբար բերվել է Նորատուսից։ Նման քար շրջակայքում չկա։

Աստվածածին գյուղում և շրջակայքում երբեք պեղումներ չեն կատարվել։
Մեր ժողովրդի կյանքի պատմության այս էջը խուլ գոցված է, և վայրը հնագետն երի պեղումներին է սպասում։

[16] Բաղդասար Հովհաննիսյան << Վաղաշեն >>, Երևան 2007թ, էջ 23

# Գլուխ երրորդ

բավական խաչքարեր և գերեզմաններ։ Իսկ 2 վերստաչափ հեռի գյուղիցս դեպի հարավ՝ կա մի ավերակ գյուղատեղում եկեղեցի, որին տեղացիք << Զորի սուրբ Աստվածածին>> անվանեն։ Որն իր արվեստով հավանաբար 11-րդ դարի կառուցվածք է։ Այդ եկեղեցին կոչվում է Զորի սուրբ Աստվածածին։ Տեղական ավանդությամբ գյուղն ավերվել Վերին Ղարանլըխ գյուղը՝ որ ի հնումն Կզնուտ գյուղ անցնելով դեպի արևելք ուղղակի կես ժամ հեռավորությամբ, և հասանք Ավդալաղալու անունով գյուղը, որ բաղկանում էր 30 հայ տանից, և ուներ հարավային եզրումն հասարակ ձևով շինած եկեղեցի հանուն սուրբ Աստվածածնի։ Գյուղը շինված էր ընդարձակ դաշտի վերա՝ ծովից կես վերստ հեռավորությամբ։ Այս տեղի քահանան ողորմելի և պարկեշտ էր, իսկ ժողովուրդն անշնհորք, ուստի և այս գյուղիցը շուտով հեռացանք։ Բայց չխնայեցինք անկիրթ ժողովրդյանը կրթական խրատ կարդալ, որ զգուշանան և ճանաչեն և կատարեն իրենց բարոյական պարտքը, և սիրով վարվեն քահանայի հետ։

Գյուղիս եկեղեցվո շրջապատում կան է լեզգիների արշավանքի ժամանակ։[17]

Այս եկեղեցվո մեջ ըստ ավանդության՝ *ապավինելով* մի հայ աղջիկ՝ ազատվել է լեզգի ասպատակներից, երբ հարձակվել են գյուղի վերա։ Աղջկա անունը եղել է Մանուշակ։ Օ՜հ. ինչե՜ր են քաշել մեր խեղճ պապերն ու տատերն մահմետական ազգերի ձեռքին, և ինչե՜ր էլ քաշում են ցայսօր. կարծես Աստված մահմետին ու ղուրանին քրիստոնեից պատիժ տվեց, բայց քրիստոնյաքս չենք զգուշանում և իրար չենք ճանարում։

Եսայի ԼԶ և ԼԷ։

Շաբոնների տոհմից Վարդան Վարդանյանը ով մասնագիտությամբ բանասեր է և սիրում է հնություններ հավաքել մեզ պատմեց գյուղի վաղնջական պատմություններից։ Հորեղբայր Վարդանի մոտ գտնվող հնությունները, որոնք գտնվել են գյուղից տարբեր աշխատանքներ կատարելու ժամանակ ունեն հարյուրամյակի պատմություն։ Նա ներկայացրեց իր բակում գտնվող քարերը, որոնք հարյուր տարի առաջ օգտագործել են գյուղի բնակիչները։ Գյուղը հնում անվանվել է Բար, այնուհետև Ավդալաղալու։ Պատմեց Կույս Վարվառայի և Զորով ելնենք Աստված

[17] Եսայի ԼԶ և ԼԷ։

ածնի եկեղեցիների
մասին։ Ըստ Վարդան Վարդանյանի այս ժամանակաշրջանում գյուղը ասպատակ
վել է ոչ թե Լեզգիների կողմից, ինչպես վկայում են հայ պատմիչները,
այլ Լենկ Թեմուրի, քանի որ Թեմուրի զորքը (Լենկթեմուրի
զորքը 1386թ անցնելով Արաքս գետը Հայաստանի հյուսիսային մասից (Սյունիք)
մտան Հայաստան), այս տարածաշրջանում սրի է մատնել ողջ բնակչությանը։
Իսկ կույս քույրերը , որոնք քրիստոնեություն են տարածել նահատակվել են
հանուն քրիստոնեության, ժողովուրդը եկեղեցին անվանել է Կույս Վարվառա ի
պատիվ կույսի, սակայն եկեղեցու իրական անունն
է սուրբ Աստվածածին, սակայն շատ քիչ է ծառայել իր նպատակին՝ 20
տարուց էլ քիչ։ Հետագայում գյուղացիները, 1830 թվականին Ալաշկերտի
Քոփկրան գյուղից, երբ եկել են եկեղեցին կիսաավեր վիճակում է եղել,
ծածկ չի ունեցել, փայտային մաս ընդհանրապես չի եղել,
իսկ պատերը կիսաքանդ են եղել։ Կույս Վարվառա մատուռն ավելի վաղ
է կառուցված եղել, եկեղեցու շուրջ գտնվող խաչքարերը ավելի վաղ շրջանի են։
Մատուռի ներսում կան խաչքարերը, որոնք շատ գեղեցիկ
են՝ ժանյակազարդ են, եկեղեցու հարավային պատի մեջ դուռ կա,
այդտեղ սրբատաշ քարով գերեզման կա, ներս
մտնելով կտեսնենք Կույս Վարվառայի մատուռը, այնտեղ հիանալի խաչքարեր
կան։ Եկեղեցին այնպես են կառուցել, որպեսզի մատուռը չվնասվի,և եկեղեցուց
մուտք լինի դեպի մատուռ ՝ մատուռն ավելի հին է քան եկեղեցին։
Եկեղեցին եղել է հողաշեն և չի ունեցել զանգակատուն,
քանի որ հնարավոր չի եղել զանգեր կախել,
զանգերը կախել են երկու սյուների վրա,
զանգերը հնչեցվել են ծիսակատարություններ կատարելիս,
ասում են այդ զանգերը այքան գեղեցիկ ղողանջներ են
արձակել և այնքան բարձր են եղել, որ Մարտունիում,
Աստղաձորում, մինչև անգամ Ձորով ելնենք Աստվածածնի դաշտերի մեջ աշխատ
ող մարդիկ այդ ձայները լսել են։ 1920թվականին, երբ բոլշևիկները մտնում և
բռնի խորհրդայնացնում են գյուղը, այդ ժամանակ վերջին անգամ Գյուլում տատն
է խփել եկեղեցու զանգերը, որպես աղետի բոթ, և այդ օրվանից զանգերը կանգնել
են մինչև 1941 թվական, 1941 թվականին զանգերը բռնագրավել են, հավանաբար
ձուլել են իբրև արկ կամ հրանոթ։
Եկեղեցին ունեցել է 2 մետր շառավիղով արծաթյա ջահ կախված՝ 80 մոմով,
խորանում կախված է եղել ոսկե թելով կարված վարագույր,
այդ ամբողջ գույքը և գրականությունը թալանվել է,
բայց եկեղեցուց միայն մեկ բան չեն կարողացել վերցնել՝ եկեղեցու զորությունը
և բուժիչ հատկությունը։Եկեղեցի էին գալիս
նաև մաշկային հիվանդություն ունեցողները։ Եկեղեցու պատերից հող են
վերցնում, ջրով շաղախ պատրաստում, մեկ- երկու անգամ քսում վերքերին և
շուտով, չգիտես ինչ հրաշքով, բուժվում[18]։ Իսկ Մանուշակի պատվին կառուցվել

---

[18] Բաղդասար Հովհաննիսյան << Վաղաշեն >>, Երևան 2007թ, էջ 24

է մատուռ Զորով ելնենք Աստվածածին տարածքում, որտեղ էլ գտնվել
է Աստվածածին գյուղը,
որի մասին է վկայում Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատյանցը: Բնակիչները այս տարածքում տարբեր աշխատանքներ կատարելիս տարբեր սրբատաշ քարեր են գտել, որոնք էլ ևս վկայում են, որ հենց այստեղ եղել է բնակատեղի,
նաև հայտնաբերվել են տարբեր տեսակի կա նաև Ձիթհանք:

1950թ Վաղաշեն գյուղի բնակիչ Իվան ամաններ, ի
դեպ Զորով ելնենք Աստվածածնի տարածքում Մալխասյանը գյուղատնտեսական աշխատանքներ կատարելիս գտել է Արտաշես Ա Բարեպաշտի թողած Արամեակ ան սահմանաբաժան

[19]քարը, որը գտնվում Երևանի պատմության պետական թանգարանում: Արտաշե ս արքայի արքունական սահմանաքարի մասին վկայում է քերթողահայր Մովսես Խորենացին, ըստ որի Սևանա լճի ավազանը հայ ժողովրդի
տոհմական օրաններից մեկն է եղել:
[20]Գյուղում կառուցված նոր եկեղեցու առաջին երեք շարքը հենց գյուղի քարհանք ից բերված քարերն են, այդ տարածքում խաչքարեր կան,
գերեզմաներ կան, որոնք միջնադարյան խաչքարերի կատարելագործված գեղեցիկ նմուշներ են և ոչ
մի նախշ չի կրկնվում:Այսինքն այս ամենը վկայում է այն մասին,
որ այստեղ բնակատեղի է եղել:Այս տարածքում եղել են մի քանի աղբյուրներ,
որոնք ցավոք ցամաքել են, այդտեղ մարդիկ երկար տարիներ են ապրել,
մատուռ են կառուցել ի պատիվ Մանուշակ կույսի,
ով ազդարարել է թշնամու մուտքը, մաքառել
է թշնամու դեմ: Բարխուդարյանը պատահմամբ Բար գյուղի տարածքում գտնվող սուրբ Հռիփսիմե վանքը վերագրել է Աստղաձոր գյուղին ,
բայց դա Վաղաշենի տարածքն
է, վանքի տարածքով և սարալանջով դամբարանադաշտ է՝ բրոնզեդարյան, կրկին գյուղատնտեսական աշխատանքներ կատարելիս բրոնզեդարյան զարդեր են հայ տնաբերվել:

Գյուղում է գտնվում Սարոյ խաչերը, որոնք գյուղացիների մոտ հայտնի են, որպես Պապեյ խաչեր անունով, այս խաչքարերը 10-13-րդ դարերի արվեստի նմուշներ են, որոնք գտնվում են գյուղամիջում, մի հասարակ մատուռի մեջ: Ըստ Բաղդասար Հովհաննիսյանի այս խաչքարերը ավելի վաղ ժամանակաշրջանի են:

Վանիկ Մուրադյանը, ով Վաղաշեն գյուղի 78 ամյա բնակիչ է և մասնագիտությամբ որմնադիր, մեզ պատմեց Սարոյ խաչքարերի մասին:

---

[19] Բաղդասար Հովհաննիսյան << Վաղաշեն >>, Երևան 2007թ, էջ 52

[20] Մովսես Խորենացի Հայոց պատմություն, էջ 121, Երևան 1990թ

Խորհրդային իշխանության տարիներին կոլտնտեսության նախագահը հանձնարարում է սրբատեղին
քանդել և սրբատեղիի քարերով կոլտնտեսության համար այլ կառույցներ կառուցել, խաչքարերը մնացել են հողի տակ անցել են երկար տարիներ, Վանիկ Մուրադյանի եղբայրը ով դպրոցական է եղել, երազ է տեսել , թե
ինչպես են խաչքարերը իրենից օգնություն խնդրում։
Դպրոցական տղան երազը պատմել է իր մայրիկին, իսկ մայրը հորդորել է տղային մոռանալ այդ մասին, վախենալով խորհրդային իշխանություններից,
իսկ Լյուդվիկը մորը բացատրել է, որ ինքը դպրոցական տղա է և իրեն ոչինչ չեն անի, այնուհետև կառուցել է մի փոքրիկ մատուռ, որտեղ տեղադրել է խաչքարերը,
իսկ 1978թ Վանիկ Մուրադյանը վերակառուցել է մատուռը։

Այժմ Սարոյ խաչքարերը գտնվում են
այստեղ՝



# Գլուխ չորրորդ

Հետազոտական խումբը ոչ
միայն ուսումնասիրություններ կատարեց սուրբ Աստվածածին եկեղեցում
, Մանուշակաձորում, այլ նաև Վաղաշեն գյուղի տարածքում,
հանդիպումներ ունեցավ գյուղի տարբեր բնակիչների հետ,
լսեց բազմաթիվ պատմություններ, կատարեց բացահայտումներ։

Վարդան Վարդանյանի տան բակում տեսավ կավե աման,
որը ըստ տանտիրոջ եղել է հնագույն ժամանակաշրջանի ,
որի միջոցով կաթից առանձնացվել է սերը։ Ամանը պատրաստված է
եղել կավից և թրծված է եղել։

Ալաշկերտից բերված թասեր,որոնք բերվել են մեր պապերի կողմից, երբ
տեղահանվել են Արևմտյան Հայաստանից

<<Շահ Իսմայիլ>> գրությամբ թասը, որը պատկանում է 16-րդ դարին։

ձեռագիր փոքրիկ գրքոցյկը՝ 18-րդ դար։

Մեր հետազոտական
թիմը մի շարք աշխատանքներ կատարեց հուշարձանների տարածքում, փնտրեց, գտավ և հիացավ, կատարեց նաև չափումներ։

Հուշակոթողը մաքրելով փշերից և տատասկներից թիմակիցները գտան օրորոցաձև տապանաքարի վրա թողնված արձանագրությունը, որը ցավոք ընթեռնելի չէր, նույնիսկ բազմաթիվ փորձերից հետո։

Նկարում տիկին Սոնան է,
ով խաչքարի մոտ նկարվել է երիտասարդ տարիներին։

Եվ նույն խաչքարի մոտ տիկին Սոնան արդեն
70 տարեկան հասակում։ Մեր խաչքարերը բազմաթիվ սերունդներ է տեսել, և սե
րունդներն են նրանցով հիացել։

Եվ իհարկե ուխտավորների խումբը << Զորով ելնենք Աստվածածին>> մատուռի մոտ հազար ու մի երազանքներ և փափագներ սրտում պահած։

# Վերջաբան

10-18րդ դարերի ընթացքում Հայկական լեռնաշխարհում ծավալված հուզումնալից և խիստ հակասական իրադարձությունների ուսումնասիրումն ու վերլուծումը ցույց տվեց, որ պատմական այդ ժամանակաշրջանում հայը կարողացել է վերածնվել, նոր շունչ հաղորդել ավերված բնակավայրերին, կառուցել նոր բնակավայրեր: Սակայն արտաքին ուժերի ազդեցության տակ ենթարկվել է տևական փորձությունների:

Մոնղոլ-թաթարական, լեզգիական արշավանքները գյուղի զարգացումը շեղել են իր բնական ուղուց: Բար գյուղի գյուղացիների այդ ժամանակաշրջանի ծանր կացությունն էլ ավելի ծանրացավ համաճարակի արդյունքում:

Սակայն, այդ պատմափուլում հայ ժողովուրդը այնուամենայնիվ կարողացավ մի շարք նախադրյալների շնորհիվ հաղթահարել և ներքին, և արտաքին մարտահրավերները, արդյունքում կենտրոնանալով մեկ միասնական պետության կազմում՝ Երևան քաղաքական կենտրոնով:

Ամփոփելով աշխատանքում քննարկված հիմնախնդիրների արդյունքները հարկ եմ համարում դրանք պարբերականացնել ըստ արդյունքների:

- Բար և Աստվածածին գյուղերը ավերվեցին կամ լեզգիների հարձակումից ինչպես վկայում է Բարխուդարյանը, կամ մոնղոլ-թաթարների կողմից, կամ համաճարակի պատճառով:

- 19-րդ դարում Արևմտյան Հայաստանից գաղթականների քարավանը կանգ առավ սուրբ Աստվածածին եկեղեցու մոտ, և կրկին շենացրեց ավերված գյուղը:

- Գյուղացիները ևս պայքարեցին Հայաստանի Առաջին Հանրապետու թյան անկախությունը պահպանելու համար։

- Անցան խորհրդային իշխանության զրկանքների ճանապարհով, տեսա ն սիրելի եկեղեցու վերածումը պահեստի։

Մեր հետազոտական թիմը շրջեց Վաղաշեն գյուղում,
հանդիպեց գյուղացիներին, գրի առավ հետաքրքիր պատմություններ գյուղի՝ գյուղ ացիների անցյալի ու ներկայի մասին, հիացավ սուրբ Աստվածածին եկեղեցով, նրա խաչքարերով, ականատես եղավ, թե ինչպես են << օխնություն>> կատարում, բարձրացավ Մանուշակաձոր, մտովի պատկերացրեց հնամենի գյուղը, գյուղացիների պայքարը քոչվորների դեմ։

Այսպիսով հետազոտական աշխատանքի վերջնարդյունքին հասնելով տեսանելի է, որ կա մի գյուղ , որի ծննդյան վկայականում Բար
է գրվել, ճակատագրի հեգնանքով դարձել է Ավդալաղալու, և
վերանվանվել Վաղաշեն։

Գյուղն անցել է երկար ճանապարհ ավերվել և կրկին վերակառուցվել է
շնորհիվ իր շինականների, շինարարների,
մտավորականների, Մանուշակների ու Վարվառանների,
անցյալը չմոռացող նորը կառուցող զավակների, բոլոր ժամանակի հերոսների։
Վաղաշենում ծնվող ամեն մի մանուկ իր հետ կբերի նոր աշխարհ,
նոր ճակատագիր։ Եվ ձևավոնվող ամեն մի անհատ իր լուման կներդնի Վաղաշե նի հասարակական կյանքի, ժողովրդի բարքերի ու սովորույթների,
ինչու չէ, նաև պատմության մեջ։

Տարիներ կանցնեն և կավելանան խաչքարերը, որոնք կմնան կանգուն իրենց դարաշրջանի մասին պատմություններ պատմելու գալիք սերունդներին, իսկ սերունդները իրենց
հերթին կխոնարհվեն պապերի շիրիմների առաջ,օրհներգելով մանուկների լույս աշխարհ գալը, ինչպես մենք ենք խոնարհվում և օրհներգում։

Վաղաշեն գյուղի բնակիչները միշտ պայքարել են հանուն հայրենիքի, մասնակցել են Սարդարապատի հերոսամարտին, որը գյուղում անվանվել է , որպես Վեդվա կռիվ, մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, Արցախյան բոլոր հերոսամարտերին: Գյուղի նոր գերեզմանատան բազալտե պատին փողփողում են եռագույնները,որոնք խոսուն վկաններն են, որ երիտասարդ բարեցիները շարունակում են պայքարել, և չտատանվեցին իրենց կյանքը դնել հայրենիքի համար պահանջվող զոհասեղանին:Սերունդներ են կրթվելու նրանց ոգով, մարտի են նետվելու << Սասնա Դավթի>> նման, ինչպես պատմել էր Բժու Բադոն: Հիմնելու են այգիներ, սիրահարվելու են գյուղին՝ գրելու են բանաստեղծություններ, գուցե այն երիտասարդների պես, որոնց սիրտը միշտ լեռներում է, գուցե այն երիտասարդների պես ովքեր ավելի բարձրում մնացին:

Հետազոտական աշխատանքը կատարելիս, որպես աղբյուր օգտագործել ենք ինչպես պատմաբանների, այնպես էլ պատվարժան վաղաշենցիների պատմածները:

Հետազոտական աշխատանքի արդյունքում՝ աշակերտները ստեղծեցին ալբոմ, որտեղ ներգրավեցին իրենց դասընկերներին, կրտսեր և ավագ ընկերներին, որպեսզի շարունակեն հետազոտել իրենց և հարակից գյուղերի պատմություններն ու ավանդույթները: Այս հետազոտական աշխատանքի միջոցով ես հասա այն վերջնարդյունքին, որը նախատեսել էի հետազոտական աշխատանքի սկզբում:

# Հավելված

| | |
|---|---|
| **Դասապլան** | 1 |
| **ՈՒսուցչի անուն, ազգանուն** Անի Կարապետյան<br>**Դպրոց** Մնաց – Մելիք Շահումյանցի անվան N1 հիմնական<br>**Դասարան** **9-րդ**<br>**Աշակերտների քանակը** **7**<br>**Ամսաթիվ** 08.07.2022թ | |
| **Հետազոտական աշխատանքի թեման՝** Սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորումը դասի դասավանդման ընթացքում։ | |
| **Ուսուցչի գործողությունները**<br>Աշակերտներին ներկայացնում եմ իրենց կողմից ուսումնասիրվելիք պատմական նյութերը, ներկայացնում են նախագծերը,որոնք քննարկվում են։ Այնուհետև աշակերտների հետ այցելություն Բար ներկայիս Վաղաշեն գյուղ, որտեղ բնակիչների հետ հանդիպում և հարցազրույց է նախատեսվում։<br>**Աշակերտների գործողությունները**<br>Աշակերտները ներկայացնում են իրենց ուսումնասիրությունները, ակտիվորեն մասնակցելու են կիրառմանը՝ հարց և պատասխանի միջոցով առաջանում են նոր հարցեր, որոնք ակտիվ կերպով ինտերակտիվ մեթոդով քննարկվում են աշակերտների կողմից։ Համեմատություն անցկացնում իրենց կատարած աշխատանքների մեջ։ | |
| **Օգտագործվող նյութեր** | Քարտեզ, ուսումնական գրականություն, նկարներ,հանդիպումներ և հարցազրույցներ, մշակութային կոթողների ուսումնասիրում։ |
| **Կապը պատմական ակտիվ մտածողության սկզբունքների հետ**<br>Պատմական հեռանկար։ | |
| **Դասի նպատակը** | 1. << Ձորով ելնենք Աստվածածին >> և << Կույս Վարվառա >> մատուռների ստեղծման պատմության ուսումնասիրումը, համեմատումն ու վերլուծումը։<br>2 |

| | |
|---|---|
| | . Աստվածածին և Բար գյուղի բնակիչների պայքարը քոչվոր ցեղերի դեմ, համաճարակի<br>տարածումը դրանց պատճառով գյուղի ավերումը:<br>3. գյուղի վերաբնակեցումը՝ եկեղեցու վերակառուցումը,<br>եկեղեցու գույքի նվիրատվությունը,<br>եկեղեցու գույքի բռնագրավումը: |
| | Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ |
| վերջնարդյունքները | **Հետազոտական աշխատանքի վերջնարդյունքները՝ Աշակերտը կկարողանա**<br><br>1. Զնավորել արժեհամակարգ:<br>2. Խորացնել և ամրապնդել ստացած գիտելիքները<br>3. Զարգացնել պատմական վերլուծություն և քննադատական մտածողությունը:<br>4. Հետազոտական աշխատանքի միջոցով ուսումնասիրել և հետամուտ լինել մշակութային կոթողների պահպանմանը: |
| **Ուսուցչի զարգացման ընթացիկ թիրախներ** | Նպատակներին հասնելու ռազմավարություն |
| Հետազոտական աշխատանքի միջոցով աշակերտների առավելագույն ներգրավվածության ապահովում | Նախատեսում եմ հետազոտական աշխատանքի միջոցով, արձանագրել սովորողներից յուրաքանչյուրի դինամիկան: |

| | |
|---|---|
| **Դասապլան** | 2 |
| **ՈՒսուցչի անուն, ազգանուն** Անի Կարապետյան<br>**Դպրոց** Մնաց – Մելիք Շահումյանցի անվան N1 հիմնական<br>**Դասարան** **9-րդ**<br>**Աշակերտների քանակը** **7**<br>**Ամսաթիվ** 10.07.2022թ | |
| **Հետազոտական աշխատանքի թեման՝** Սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորումը դասի դասավանդման ընթացքում։ | |
| **Ուսուցչի գործողությունները**<br>Աշակերտներին հետ քննարկում եմ կատարված աշխատանքները, հասկանում եմ արդյոք կան անհասկանալի կամ դեռ չպարզաբանված հարցեր, ներկայացնում եմ իրենց կողմից ուսումնասիրվելիք նոր առաջադրանքները, ներկայացնում են նախագծերը,որոնք կրկին քննարկում ենք։ Այնուհետև աշակերտների հետ այցելում ենք << Կույս Վարվառա>> և << Մանուշակաձոր>>, կտեսնենք և կհետազոտենք մատուռները և խաչքարերը, կտեսնենք նաև << Դևաքարը>>։<br>**Աշակերտների գործողությունները**<br>Աշակերտները ներկայացնում են իրենց առաջարկությունները, ակտիվորեն մասնակցելու են խաչքարերի և մատուռների ուսումնասիրությանը, փորձում արտագրել խաչքարերի վրա գրված արձանագրությունները, Համեմատություն անցկացնում երկու մատուռների խաչքարերի միջև։ | |
| **Օգտագործվող նյութեր** | Քարտեզ, ուսումնական գրականություն, մետրեր, նոթատետրեր և գրիչներ, աշխատանքային իրեր և ձեռնոցներ։ |
| **Կապը պատմական ակտիվ մտածողության սկզբունքների հետ** | |

| Պատմական հեռանկար: | |
|---|---|
| **Դասի նպատակը** | 1. << Զորով ելնենք Աստվածածին >> և << Կույս Վարվառա >> մատուռների ստեղծման պատմության ուսումնասիրումը, համեմատումն ու վերլուծումը:<br>2<br>. Աստվածածին և Բար գյուղի բնակիչների պայքարը քոչվոր ցեղերի դեմ, համաճարակի<br>տարածումը դրանց պատճառով գյուղի ավերումը:<br>3. գյուղի վերաբնակեցումը՝ եկեղեցու վերակառուցումը, եկեղեցու գույքի նվիրատվությունը,<br>եկեղեցու գույքի բռնագրավումը:<br>4. << Սարոյի խաչերի >> ուսումնասիրությունը:<br>5. Գյուղի հայտնի բնակիչների կյանքի պատմությունների մասին լսելը համագյուղացիների կողմից: |
| | Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ |
| վերջնարդյունքները | **Հետազոտական աշխատանքի վերջնարդյունքները՝ Աշակերտը կկարողանա**<br><br>1. Զնավորել արժեհամակարգ:<br>2. Խորացնել և ամրապնդել ստացած գիտելիքները<br>3. Զարգացնել պատմական վերլուծություն և քնադատական մտածողություն:<br>4. Հետազոտական աշխատանքի միջոցով ուսումնասիրել և հետամուտ լինել մշակութային կոթողների պահպանմանը: |
| **Ուսուցչի զարգացման ընթացիկ թիրախներ** | Նպատակներին հասնելու ռազմավարություն |
| Հետազոտական աշխատանքի միջոցով աշակերտների առավելագույն ներգրավվածության ապահովում | Նախատեսում եմ հետազոտական աշխատանքի միջոցով, արձանագրել սովորողներից յուրաքանչյուրի դինամիկան: |

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Չև 3

Գեղարքունիք , հ. Վաղաշեն

Մարզ, համայնք, հասցե

1. Մատուռ
D=0.50
H=2.60
h=2.33




Լրացուցիչ նշումներ՝

Մասշտաբ 1:100

| 1. Մասում | | | |
|---|---|---|---|
| Կետերի համարները | Կոորդինատներ | | Հեռավորություններ, մ |
| | x | y | |
| 1 | 8526694.9715 | 4441672.1480 | 3.77 |
| 2 | 8526693.9489 | 4441675.7748 | 4.12 |
| 3 | 8526697.9560 | 4441676.7163 | 3.50 |
| 4 | 8526698.8670 | 4441673.3267 | 4.17 |
| 1 | 8526694.9715 | 4441672.1480 | |

| 2. Խալթար | | | |
|---|---|---|---|
| Կետերի համարները | Կոորդինատներ | | Հեռավորություններ, մ |
| | x | y | |
| 1 | 8526670.9825 | 4441673.9217 | |

| 3. Խալթար | | | |
|---|---|---|---|
| Կետերի համարները | Կոորդինատներ | | Հեռավորություններ, մ |
| | x | y | |
| 1 | 8526686.4310 | 4441664.8290 | |

| | | |
|---|---|---|
| | ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | Շեմ 1 |
| | Գեղարքունիք , հ. Վաղաշեն | |
| | Մարզ, համայնք, հասցե | |
| | | |
| | Յուրահատկացման հիմքը | |

| | |
|---|---|
| Սանդեսեք հա | 0.001491 |
| Ծածկագիր | 05-082-0211- |
| Նպատակային նշանակություն | Հատուկ պահպանվող |
| Գործառնական նշանակություն | Պատմության և մշակույթային |
| Դիտարկվող գոտիներ | |

| Կետերի համարներ | Կոորդինատներ | | Հեռավորություններ |
|---|---|---|---|
| | x | y | |
| 1 | 852666 94.9715 | 4441672.1401 | 3.77 |
| 2 | 852669 2.9429 | 4441675.7749 | 4.12 |
| 3 | 852667.9560 | 4441676.7163 | 3.50 |
| 4 | 852666 8.8670 | 4441673.3267 | 4.17 |
| 1 | 852666 4.9715 | 4441672.1401 | |

Մասշտաբ 1:200


ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ
Ջև 3
Գեղարքունիք , հ. Կաղաշեն
Մարզ, համայնք, հասցե
1.05
2
2.16
1.05
3
2.16
5.60
1.30
11.17
1
103.62
1. Եկեղեցի
D=1.50-1.70
H=2.40-4.40
h=2.10-4.10
7.16
Լրացուցիչ նշումներ՝
Մասշտաբ 1:100

| 1. Եկեղեցի | | | |
|---|---|---|---|
| Կետերի համարները | Կոորդինատներ | | Հեռավորություններ |
| | x | y | |
| 1 | 8527999.8351 | 4444649.2648 | 10.32 |
| 2 | 8528000.6929 | 4444659.5500 | 17.40 |
| 3 | 8528016.0213 | 4444657.3929 | 10.24 |
| 4 | 8528015.8283 | 4444647.7220 | 4.10 |
| 5 | 8528012.7372 | 4444648.8929 | 5.44 |
| 6 | 8528012.2451 | 4444642.6752 | 4.30 |
| 7 | 8528007.9527 | 4444643.0641 | 5.44 |
| 8 | 8528008.4548 | 4444648.4818 | 8.65 |
| 1 | 8527999.8351 | 4444649.2648 | |

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Գեղարքունիք , հ. Վաղաշեն
Մարզ, համայնք, հասցե

Հողհատկացման հիմքը

Մակերես հա 0.0200
Ծածկագիր 05-082-0058
Նպատակային նշանակություն Գյուղատնտեսական նշանակության հողեր
Հողօգտագործման նշանակություն Գյուղատնտեսական նշանակության հողեր
Հողատեսքի բնութագիր

Կոորդինատներ

| Կետերի համարները | x | y | Հեռավորություններ |
|---|---|---|---|
| 1 | 8527999.8351 | 4444649.2648 | 10.32 |
| 2 | 8528000.6929 | 4444659.5500 | 17.40 |
| 3 | 8528018.8213 | 4444657.8929 | 10.24 |
| 4 | 8528016.8293 | 4444647.7229 | 4.10 |
| 5 | 8528012.7372 | 4444648.0929 | 5.44 |
| 6 | 8528012.2451 | 4444642.6752 | 4.30 |
| 7 | 8528007.9627 | 4444643.0641 | 5.44 |
| 8 | 8528008.4548 | 4444648.4838 | 8.65 |
| 1 | 8527999.8351 | 4444649.2648 | |

Մասշտաբ 1:1000

## Օգտագործված գրականության ցանկ

1. Ս. Բարխուդարյան << Դիվան հայ վիմագրության>> պրանկ 4, Երևան 1973թ.

2. Բաղդասար Հովհաննիսյան << Վաղաշեն >>, Երևան 2007թ.

3. Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատյանց << Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գավառի >> Երևան 2016թ.

4. Մովսես Խորենացի << Հայոց պատմություն >>, Երևան 1990թ

5. Գիրք Պատմության Ուսուցման Ինչու՞, Ինչպե՞ս Պարադիգմա կրթական հիմնադրամ, Երևան 2020թ